community

The New Apostolic Church around the world

01/2025/AM

Ժամանակն է բարին անելու:

Խմբագրական
Ժամանակն է բարին անելու:

Ժամերգություն
Ճանապարհը հարթել - բոլորի համար

Վարդապետական ուսմունք
Միասնականություն և բազմազանություն

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ժամանակն է բարին գործելու:

Ժամերգություն

4 Ճանապարհը հարթել-բոլորի համար

Մանկական անկյուն

10 Կորած ոչխարի մասին

12 Այցելություն Նաելլեին՝ Դակարում / Սենեգալ/

Տեսություն

14 Եկեղեցու միասնականությունն ու բազմազանությունը

Ընդհանուր լուրեր

18 Երիտասարդությունը վառում է փարոսը Կանադայում

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ ՆԱԵ Կանադա
Շապիկի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Կանադա

Ժամանակն է բարին անելու

Լուսանկարը՝ Միջազգային ԱՄՆ

Սիրելի քույր-եղբայրներ,

2025 թվականի մեր նշանաբանն է՝ ,, Ժամանակն է բարին անելու,,: Բարին այն է, ինչը դուր է գալիս Աստծուն, ինչը համապատասխանում է նրա կամքին: Իսկ թե ինչպես պետք է բարին անել, դա սովորեցնում է Հիսուս Քրիստոսը:

Աստված ուզում է բոլոր մարդկանց փրկությունը: Դա սկսվում է հենց մեզնից: Այսինքն՝ արա ինքդ քեզ բարին- զբաղվիր քո փրկությամբ:

Ինչքան քեզ ավելի շատ է պարզ դառնում, որ Աստված քեզ ամենայն բարին է անում, այնքան քեզ մոտ ավելի շատ է ցանկություն առաջանում բարին անելու:

Հատկապես համայնքում՝ Հիսուսն ուզում է, որ յուրայինները ուշադրություն դարձնեն միմյանց վրա, հոգան միմյանց համար և օգնեն իրար: Նա ուզում է, որ մենք ամուր միասնականության մեջ լինենք:

Մենք այսպես մեր օրինակն ենք ցույց տալիս Հիսուս Քրիստոսին՝ նրա Ավետարանը գործում է յուրաքանչյուր ժամանակ, յուրաքանչյուր իրավիճակում: Իսկ հետո մյուսներն էլ են տեսնում և զգում, որ ,, Այստեղ բարին է արվում,,:

Մենք պետք է ամեն ժամանակ բարին անենք ամենքին, որը մենք ինքներս ենք մեզ ցանկանում: Եկեք ամեն հնարավորություն օգտագործենք, այո ակտիվորեն փնտրենք այդ հնարավորությունները: Սուրբ Հոգին մեզ ցույց է տալիս, թե մենք ինչ կարող ենք անել:

Եկեք բարին անենք- հիմա:

Ժան-Լյուք Շնայդեր

Ճանապարհը հարթել - բոլորի համար

2024-ի հունիսի 30-ին գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերը ժամերգություն տոնեց Մզուզուում / Մալավի

Լուսանկարը՝ ՆԱԵ Մալավի

Եսայի 62,10

Գնացեք, ներս մտեք իմ դռներով, պատրաստեցեք ճանապարհները, շտկեցեք շավիղները, ճամփա բացեք իմ ժողովրդի համար, հեռացրեք քարերը ճանապարհից և դրոշակ բարձրացրեք հեթանոսների համար:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մեր ուրախությունը այսօր հավաքվելու առիթով վաղը մեծ է լինելու: Դրա պատճառը շատ պարզ է: Ես կարծում եմ, որ մենք բոլորս պահանջ ենք զգում Աստծուն երկրպագելու և նրան իր ողորմածության ու գթասրտության համար շնորհակալություն հայտնելու: Եվ մենք ուզում ենք նախապատրաստվել Քրիստոսի գալստյանը, ինչը նշանակում է, որ մենք ավել ու ավելի ենք ուզում նմանվել Հիսուս Քրիստոսին: Դա նշանակում է, որ ունենալ նույն սերն ու նույն պահանջը, ինչը Հիսուս Քրիստոսն ունի, և անել նույն գործը, որը նա է արել: Հիսուս Քրիստոսն ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն: Եվ ինչքան շատ մենք աճենք Քրիստոսի էությամբ, այնքան ավելի շատ մեզ մոտ ցանկություն ու պահանջ կառաջանա օժանդակել մեր մերձավորի փրկությանը՝ ինչպես ողջերի, այնպես էլ՝ մահացածների:

Քանի որ գալիք կիրակի տեղի է ունենալու ննջեցյալների համար ժամերգությունը, մենք

այսօրվանից կենտրոնանում ենք անդրշիրիմյան աշխարհի հոգիների վրա, որի համար էլ մենք Աստվածաշնչից Եսայի մարգարեի այս խոսքի մեջբերումն արեցինք:

Դուք գիտեք այն ժամանակվա մարդկանց պատմությունը: Երկիրը թշնամու կողմից հարձակման էր ենթարկվել, թագավորը հաղթում է և բնակչության մի մասին աքսորում: Երուսաղեմ քաղաքն ավերվում է, իսկ մարդիկ շատեն տխրում: Դա տևում է մի քանի տասնամյակ, մինչ Աստված նվիրում է իր ողորմածությունը և փոխում իրավիճակը: Նրանք, ովքեր մնացել էին Երուսաղեմում, պետք է քաղաքը նորից վերակառուցեին, իսկ նրանք, ովքեր աքսորված էին, իրավունք ունեին վերադառնալ Երուսաղեմ: Աստվածաշնչյան մեր այս տեքստում Աստված խոսում է նրանց հետ, ովքեր մնացել էին Երուսաղեմում, և հորդորում է, որ ճանապարհ պատրաստեն նրանց համար, ովքեր աքսորից պետք է վերադառնան: Նրանք պետք է նշան դնեն, որպեսզի նրանց ճանապարհը ցույց տան և ապացուցեն, որ դա այն վայրն է, որտեղ նրանք պետք է վերադառնան: Նրանք պետք է քարերը հեռացնեին, այսինքն նրանց վերադարձի ճանապարհը հեշտացնեին: Սա է ատվածաշնչյան մեր խոսքի բովանդակությունը:

Նայիր մերձավորին և աջակցիր նրա փրկությանը:

Մեզ համար՝ որպես քրիստոնյաներ, որպես Աստծո նորառաքելական զավակներ, Երուսաղեմ քաղաքը, Սիոնը, Քրիստոսի եկեղեցու պատկերն է: Երուսաղեմն այն վայրն է, որտեղ Աստված բնակվում է իր ժողովրդի հետ, որտեղ մենք հանդիպում ենք Աստծուն և կարողանում ենք միասնություն կազմել նրա հետ: Նրանք, ովքեր աքսորավայրում են, բոլոր նրանք են, ովքեր դեռ չարի տիրապետության ներքո են գտնվում: Աստված ցանկանում է նրանց փրկել և առաջնորդել դեպի իր քաղաքը, Քրիստոսի՝ եկեղեցին-ինչպես ողջերին,այնպես էլ՝ մահացածներին:

Եվ նա ասում է մեզ, որ մենք, որ արդեն այդ քաղաքում ենք, մենք պետք է դուրս գանք, նշան դնենք և քարերը ճանապարհից հեռացնենք, որպեսզի նրանք կարողանան ճանապարհը գտնել և գալ Երուսաղեմ: Օգտագործելով Եսայի մարգարեի բերած պատկերը, այն է՝ դարպասներով անցնելը չի նշանակում, որ մենք պետք է եկեղեցին թողնենք: Այստեղ ես վկայակոչում եմ Հիսուսի առակը, երբ նա ,,Մոլորյալ որդու վերադարձը,, առակում նկարագրում էր Աստծո պահվածքը մեղավորի հանդեպ: Երիտասարդը հեռանում է հայրական տնից, բայց, երբ նա որոշում է ետ վերադառնալ տուն, նրա հայրը, այս դեպքում Աստված, չի մնում տանը նստած և սպասում այնտեղ, այլ վազում է նրան ընդառաջ և փաթաթվում է նրա վզով:

Այս պատմությամբ Հիսուսն ուզում է ցույց տալ Աստծո սերը մեղավորի հանդեպ: Եվ Աստված ասում է մեզ, որ մենք էլ պետք է դուրս գնանք, դա նշանակում է, որ մենք միայն մեր սեփական փրկության համար չպետք է հետաքրքրվենք, այլ նաև մերձավորի փրկությունը ևս պետք է մեր սրտերում լինի: Մենք չպետք է եսասեր լինենք:

Նայիր մերձավորին և նպաստիր նրա փրկությանը: Գնա նրա մոտ: Դա նշանակում է, որ մենք պետք է հոգանք նրա համար, կիսենք նրա տառապանքը, համերաշխ լինենք և նրան գիտենալ տանք, որ մենք ավելի լավը չենք, քան ինքը: Մենք պետք է նրան հարգանքով վերաբերվենք: Դա նշանակում է, որ մենք չպետք է այն կարծիքին լինենք, որ մենք վաստակել ենք փրկությունը, քանի որ մենք ավելի լավն ենք, քան մյուսները: Դա մենք չենք վաստակել որպես Աստծո զավակ, դա ողորմածության հետևանք է: Մենք ավելի լավը չենք, քան մերձավորը: Եվ մենք մեզ ցանկանում ենք, որ մերձավորն էլ արժանա նույն ողորմածությանը, որին մենք ենք արժանացել: Այսինքն՝ մենք պետք է զգայուն լինենք ուրիշների տառապանքի հանդեպ, համերաշխ լինենք նրանց հետ և գիտակցենք, որ մենք բոլորս հավասար

Շրջանային առաքյալ Քուբուբա Սոկոյի հետ միասին ներկա էին նաև մի քանի աֆրիկացի շրջանային առաքյալի օգնականներ և առաքյալներ

ենք, քանի որ մենք բոլորս մեղավոր ենք, և ոչ ոք չի վաստակել փրկությունը:Ինչպե՞ս կարող ենք մենք օգտակար լինել անդրշիրիմյան աշխարհի մարդկանց: Մեր աղոթքներով, մենք կարող ենք նրանց համար բարեխոս լինել: Իսկ դա մեր երկնային Հոր կոչն է՝ աղոթեք անդրշիրիմյան աշխարհի մարդկանց համար, ցույց տվեք նրանց ձեր սերը և աղոթեք նրանց փրկության համար: Աղոթեք ոչ միայն ձեզ համար, հոգացեք ոչ միայն ձեր փրկության համար, մտածեք մերձավորի փրկության համար: Գնացեք դեպի ուրիշները, ցույց տվեք նրանց ճանապարհը, որպեսզի նրանք իմանան, որ սա այն վայրն է, որտեղ նրանք պետք է գան: Սա այն վայրն է, որտեղ Աստված բնակվում է իր ժողովրդի կողքին: Սա այն վայրն է, որտեղ մենք պետք է գնանք:

Աստծո ժողովրդի միասնականությունը նշան է, որ այստեղ այն վայրն է, որտեղ գործում է Աստված:

Ինչպես կարող ենք մենք նշան ցույց տալ ողջերին և մահացածներին, որպեսզի նրանք իմանան, որ սա հենց այդ վայրն է: Ամենից առաջ նրանով, որ մենք արտահայտենք մեր շնորհակալությունը Աստծո հանդեպ: Մենք շնորհակալ ենք Աստծուն մեր փրկության համար ինչպես լավ, այնպես էլ վատ օրերին: Եվ, եթե մենք կարիքի մեջ ենք և ապրում ենք դժվար ժամանակներ, այնուամենայնիվ, մենք շնորհակալ ենք նրան: Մենք շնորհակալ ենք Աստծո սիրո համար, նրա ողորմածության համար և նրա փրկության համար: Իսկ դա օգնում է մյուսներին՝ ճանաչելու, թե ինչ կարևոր են փրկությունն ու ողորմածությունը: Նրանք դա տեսնում են՝,,Օ, սա պետք է ինչ-որ առանձնահատուկ բան լինի, քանզի նրանք անգամ կարիքի մեջ շնորհակալ են,,: Այսինքն՝ մենք պետք է օրինակ լինենք,

Ժամերգությունը պարուրված էր երաժշտությամբ

որպեսզի նրանք տեսնեն ու ճանաչել կարողանան՝ ,, Օ, այնտեղ փրկություն կա: Նրանք շնորհակալ են ինչպես լավ օրերին, այնպես էլ վատ օրերին,,: Մենք պետք է նրանց ցույց տանք, որ մենք Աստծո ժողովուրդ ենք և այլևս չարի տիրապետության տակ չենք: Մեր առօրյա պահվածքի ձևը ցույց է տալիս, որ այստեղ է փրկությունը: Մարդիկ պետք է իմանան, որ մենք՝ որպես Աստծո զավակներ, այլևս ստիպված չենք հետևել սատանային: Աստված մեզ ունակ է դարձրել այլ կերպ գործելու և այլ կերպ վարվելու: Մենք այնպես չենք արձագանքում, ինչպես՝ մյուսները, այլ յուրաքանչյուր իրավիճակում գործում ենք Աստծո կամքի համաձայն:

Մենք մեզ պահենք ինչպես Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ: Թույլ չտանք, որ ուրիշներն ազդեն մեր պահվածքի վրա: Անգամ, եթե նրանք անարդար են գործում, մենք ճիշտն անենք: Վիրավորանքներին վիրավորանքներով չպատասխանենք և չարին չարով չփոխհատուցենք: Մենք այլևս մեղքի տիրապետության տակ չենք: Մենք հնարավորություն ունենք բարին անելու: Եկեք դա անենք:

Հիսուսն ասում է՝,,Սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք,,/ տես՝ Հովհաննես 13, 34-35/: Նա անգամ աղոթում էր՝ Հայր այնպես արա, որ նրանք միասնական լինեն, որպեսզի մարդիկ կարողանան հավատալ, որ դու ես ինձ ուղարկել: Սերն իմ եղբոր ու քրոջ հանդեպ եկեղեցում, միասնությունը, Աստծո ժողովրդի միությունը նշան է, որը հստակեցնում է այն, որ այստեղ է այն վայրը, որտեղ Աստված գործում է, այստեղ է այն վայրը, որտեղ կարելի է հաղթահարել մեղքը, այստեղ է Աստծո բնակարանը երկրի վրա: Սա նշան է: Սիրելի եղբայրներ և քույրեր, Աստծո հանդեպ մեր շնորհակալությունը լավ և վատ օրերին, մեր պահվածքը, մեր խուսափելը չարին չարով պատասխանելուց, միմյանց հանդեպ մեր սերը, և Աստծո ժողովրդի միասնականությունը նշաններ են, որոնք մարդկանց ցույց են տալիս՝,, Արի, այստեղ է փրկությունը,,:

Հետո մենք պետք է խոչընդոտները, քարերը ճանապարհից մաքրենք: Ի՞նչը կարող է երկրի վրա և անդրշիրիմյան աշխարհում մարդկանց համար խոչընդոտ լինել մեր ուսմունքն ընդունելիս: Կա մեկ քար, որը ներկայացնում է մեծ խոչընդոտ: Իսկ դա այն է՝ եթե մենք պահանջում ենք, որ նրանք դառնան այնպիսին, ինչպիսին մենք ենք, ու մենք նրանց ստիպում ենք ընդունել մեր կանոնները՝ եթե նրանք փրկություն են ուզում, ապա պետք է այնքան ժամանակ նորառաքելական լինեն, ինչքան մենք ենք եղել, եթե նրանք ցանկանում են փրկվել, ապա պետք է այնքան երկար ժամանակ աշխատեն, ինչքան մենք ենք աշխատել, եթե նրանք ուզում են փրկվել, ապա պետք է նրանք էլ նույն ձևով տառապեն, ինչպես մենք ենք տառապել, եթե նրանք փրկվել են ուզում, ապա պետք է դառնան քեզ և ինձ նման, իսկ դա նրանց համար հնարավոր չի դարձնում փրկվելը: Մաքրեք այդ քարերը ճանապարհից:

Մենք մեզ չպետք է պահենք մոլորյալ որդու ավագ եղբոր նման, ով երջանիկ չէր այն բանի համար, որ իր հայրը կրտսեր որդուն ողորմածություն նվիրեց: Հիսուսը սա դատապարտում է: Եվ ձեզ մի պահեք խաղողի այգու աշխատավորների նման, ովքեր զայրացել էին այն բանի համար, որ վերջինը ներկայացած աշխատավորն այնքան աշխատավարձ ստացավ, ինչքան առաջինը ներկայացածը: Յուրաքանչյուրը վաստակում է ողորմածություն: Նրանց մի ստիպեք ձեր կանոնները:

Թույլ տվեք, որ Աստված բարին կարողանա անել մերձավորին, և հեռացրեք խոչընդոտը:

Մեկ այլ խոչընդոտ ևս՝ օրինակ, երբ մենք բողոքում ենք անդրշիրիմյան աշխարհի հոգիներից, ապա մեր կշտամբանքներն ու մեղադրանքները փրկության ճանապարհին խոչընդոտներ են դառնում: Ինչպես պետք է նրանք միանան մեր հավատին, եթե ունենան այս զգացումը՝,,Մենք կատարյալ չենք, նրանք բողոքում են մեզնից,,: Նրանք պետք է իմանան, որ մենք ներել ենք իրենց: Այլևս ոչ մի կշտամբանք ու մեղադրանք չպետք է լինեն: Մենք պետք է նրանց ներենք, ինչպես Աստված է մեզ ներում: Սա խոչընդոտ է, քար, որը մենք կարող ենք հեռացնել ճանապարհից:

Կան նաև այլ քարեր, այլ խոչընդոտներ, որոն մենք չենք կարող հեռացնել: Երևույթներ, որոնք դժվարացնում են մարդկանց փրկվել, և մենք չենք կարող դրանք հեռացնել: Բայց մենք կարող ենք նրանց օգնել այդ խոչընդոտները հաղթահարելու: Մեծ խոչընդոտ, մեծ քար է մեր սեփական ոչ կատարյալ լինելը: Մենք նրանց հրավիրում ենք՝ ,, Եկեք: Այստեղ է Աստծո գործը, իսկ հետո նրանք նայում են իրենց շուրջը և տեսնում են ,, Բայց նրանք ամեն ինչ են, բացի կատարյալ լինելուց: Պետք է սուրբ լինել: Նայեք նրանց: Նայեք առաքյալներին, հոգևորականներին, նրանք ամեն ինչ են, բացի սուրբ լինելուց: Այնքան շատ հակասություններ կան համայնքներում,,:

Դա մի հսկայական քար է, որը խանգարում է, որ հոգիներն իրար միանան: Եվ դա խոչընդոտ է, որը մենք չենք կարող հեռացնել, քանի որ մենք բոլորս, իսկ առաջինը ես , ում վերաբերում է դա, մինչև վերջ մեղավոր ենք և մեղավոր էլ մնում ենք: Անգամ, եթե մենք մեր լավագույնն ենք տալիս, մեր համայնքներում միշտ հակասություններ են լինում: Մենք միշտ մեղք ենք գործում: Մենք բոլորս սխալներ ենք անում: Մենք չենք կարողանում այս քարը հեռացնել, բայց մենք կարող ենք հոգիներին օգնել այդ խոչընդոտը հաղթահարելու նրանով, որ մենք նրանց օրինակ ենք ցույց տալիս, թե ինչպես ենք մենք վերաբերում հակասություններին և դրանք լուծում:

Մենք կատարյալ չենք, բայց հոգիները պետք է ճանաչել կարողանան, որ մենք ճիշտ ենք: Եվ մենք երբեք չպետք է դադարենք աշխատել մեզ վրա և մեզ ավելի լավը դարձնել: Մենք պետք է զջում և հնազանդություն ցույց տանք ու ողորմածություն փնտրենք: Այս ձևով մենք կարող ենք այդ

Շրջանային առաքյալի օգնական Արնոլդ Միանգոն ժամերգության ժամանակ ուղարկվեց հանգստի

հոգիներին օգնել խոչընդոտները հաղթահարելու, որոնք առաջանում են մեր ոչ կատարյալ լինելուց: Մենք կարող ենք նրանց ցույց տալ ,, Այո, կան հակասություններ, բայց տեսեք, թե մենք ինչպես ենք այն լուծում: Իհարկե, մենք մեղք ենք գործում, բայց մենք անկեղծ ենք, հնազանդ և զղջալու պատրաստ, և ներում ենք խնդրում: Այո, մենք սխալներ ենք անում, բայց մենք ձգտում ենք մեզ ավելի լավը դարձնել,,: Այս ձևով մենք կարող ենք նրանց օգնել խոսչընդոտները հաղթահարելու:

Մեկ այլ խոչընդոտ էլ նրանց սեփական ոչ կատարյալ լինելն է: Նրանք մեզ նման թույլ մարդիկ են, իսկ մենք ասում ենք նրանց, որ նրանք պետք է դառնան Հիսուս Քրիստոսի նման: Իսկ նրանք նկատում են, որ նրանց չի հաջողվի դա՝,, Դա դժվար է: Ես դա չեմ կարող,,: Մենք կարող ենք նրանց օգնել նրանով, որ նրանց գիտենալ տանք, որ Աստված սեր է: ,, Վստահեք նրան: Նա ձեզ օգնելու է: Նա ձեզ տալիս է իր խոսքը, իր ողորմածությունը և Սուրբ Հաղորդությունը: Դուք միավորվելու են Աստծո զավակների հետ և Աստծո օգնությամբ ու ողորմածությամբ,նաև ձեր շրջապատի եղբայրների ու քույրերի օգնությամբ դուք կարող եք ձեր սեփական ոչ կատարյալ լինելը հաղթահարել, և ամեն ինչ կստացվի,,: Եվ Սուրբ Հոգուց բխող այդ մխիթարության շնորհիվ մենք օգնում ենք նրանց՝ այդ խոչընդոտը հաղթահարելու:

Կա ևս մեկ խոչընդոտ, վերջինը, որը մենք չենք կարողանում ճանապարհից հեռացնել: Հիսուսն ասում էր՝,, Եթե մեկը կամենում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և նա իմ

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը անմիջականորեն դիմեց հոգևորականներին

ետևից,, / Մատթեոս 16, 24/: Սա աստվածային կանոն է: Եթե հետևում են Քրիստոսին, ապա պետք է անցնեն դժվարությունների միջով և հակադրվեն թշնամուն: Որպեսզի նրան հետևեն, ապա պետք մի շարք բաներից հրաժարվեն: Իսկ դա շատ դժվար է: Եվ դա խոչընդոտ է, բայց մենք կարող ենք օգնել խոչընդոտը հաղթահարելու նրանով, որ հոգիներին ցույց տանք, թե ինչ կարևոր ու արտակարգ է մեր երկնային Հոր փառահեղությունը: Ինչը մենք միշտ այստեղ՝ երկրի վրա անում ենք, գիտենք, որ իր վարձքն է ունենալու, պետք է հավատարիմ մնալ, քանի որ երկնքի փառահեղությունն այնպես մեծ է լինելու, որ մենք այլևս չենք հիշելու երկրի վրա կրած տառապանքների մասին: Մի դադարեք, պայքարը իր վարձքին է արժանանալու: Միասնությունը երկնքում ավելի մեծ է, քան այն բոլոր բաները, որոնք այսօր դուք կրում եք:

Եկեք այդ հոգիներին օգնենք հաղթահարելու խոչընդոտները, որոնք չենք կարողանում հեռացնել: Իսկ այն, ինչը մենք կարող ենք ճանապարհից մաքրել, դա մենք պետք է անենք:: Սրանք խոչընդոտներն էին, որոնք կաշկանդում են անդրշիրիմյան աշխարհի հոգիներին: Բայց ես նաև գիտեմ, որ մենք ունենք եղբայրներ ու քույրեր, որոնք հեռացել են Աստծո քաղաքից: Պատճառները բազմաթիվ են: Շատերը պազապես մոլորվել են և գնացել: Այդ նույն խոսքը վերաբերում է նաև նրանց: Մենք ուզում ենք, որ նրանք էլ մեզ հետ փրկվեն, մենք միշտ աղոթում ենք նրանց փրկության համար: Շատ կարևոր է նրանց համար, որ ետ վերադառնան: Եկեք խոչընդոտները հեռացնենք: Եղբայրներ և քույրեր, ոչ մի մեղադրանք, ոչ մի կշտամբանք, այլ՝ ներում, սեր և շնորհակալություն, եթե նրանք ետ գան: Այսպես մենք նրանց ցույց կտանք, որ սա այն վայրն է, որտեղ գործում է Սուրբ Հոգին և որտեղ Աստված բնակվում է իր ժողովրի հետ: Վերաբերմունքն այստեղ այլ է: Մենք պետք է նրանց իմանալ տանք, որ նրանք կատարյալ են, որ մենք սիրում ենք նրանց: Մենք ցանկանում ենք, որ նրանք էլ մեզ հետ փրկվեն: Եկեք քարերը ճանապարհից հեռացնենք՝ ոչ մի մեղադրանք կամ կշտամբանք: Մենք պետք է պարզապես խաղաղ լինենք և ներենք ու նրանց ասենք, որ բարի գալուստ ենք ասում նրանց մեր շրջանում: Հիշեք մոլորյալ որդու պատմությունը:

Հիմնական մտքեր

Մենք ցանկանում ենք մերձավորի փրկությունը: Մեր շնորհակալությունը, մեր պահվածքը և մեր սերը միմյանց հանդեպ հաստատում են, որ Քրիստոսը գործում է եկեղեցում: Մենք ցույց ենք տալիս միմյանց հանդեպ մեր կարեկցանքն ու մտահոգությունը:

ԿՈՐԱԾ ՈՉԽԱՐԻ ՄԱՍԻՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15,1-7–Ի

Երբ Հիսուսը խոսում էր, բոլորը լսում էին - տղամարդիկ, կանայք, երեխաներ: Մի անգամ Հիսուսը մի պատմություն պատմեց կորած ոչխարի մասին՝

,, Եվ բոլոր մաքսավորներն ու մեղավորները նրա մոտ էին, որպեսզի լսեն նրան: Փարիսեցիներն ու օրենսգետները տրտնջում էին և ասում. ,, Ինչու՞ է սա ընդունում մեղավորներին և ուտում նրանց հետ,,: Հիսուս նրանց այս առակն ասաց. ,, Ձեզնից ով է այն մարդը, որ, երբ հարյուր ոչխար

ունենա և կորցնի նրանցից մեկը, արոտավայրում չի թողնի իննսուիններին և չի գնա կորածի ետևից, մինչև որ այն գտնի: Եվ երբ այն գտնի, կդնի այն իր ուսերի վրա խնդությամբ և կգնա տուն, կկանչի բարեկամներին և հարևաններին ու նրանց կասի՝ ուրախացեք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխարը: Ասում եմ ձեզ, որ այսպես ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ ,,:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԱԵԼԼԵԻՆ ԴԱԿԱՐՈՒՄ / ՍԵՆԵԳԱԼ/

Իմ անունը Նաելլե է և ես յոթ տարեկան եմ: Մեր ընտանիքում ես ամենակրտսերն եմ: Ես ունեմ երկու քույր՝ Թրասին և Գերթին, և մեկ եղբայր՝ Յովեն: Նրանք 14,12 և 17 տարեկան են:

Իմ ընտանիքն ապրում է Դակարում՝ Սենեգալի մայրաքաղաքում, Աֆրիկայի արևմտյան մասում: մենք խոսում ենք ֆրանսերեն, բայց իմ եղբայրն ու քույրերս խոսում են նաև վոլոֆ լեզվով, որը տեղական լեզուներից մեկն է:

Սենեգալում նոյեմբերից մինչև հունիսը տիրում է չորային եղանակ: Դա նշանակում է, որ այդ ժամանակահատվածում անձրև չի տեղում: հունիսից մինչև հոկտեմբեր հաճախ է անձրևում: Քանի որ Դակարը գտնվում է ծովի ափին և ձմռանը ևս ցուրտ չի լինում, կարելի է ողջ տարի լողալ- կամ լողափին զբոսնել կամ ավազի վրա պարել: Մարդիկ այստեղ սիրում են երաժշտություն և պար:

Իմ հայր Աբդոն Փրիվաթը Լիբերթե 5 համայնքի հովիվն ու առաջնորդն է: Իմ մայր Յուլի Նանինան երգում է երգչախմբում: Նա երգում է ալտ, բայց տանը երբեմն նաև՝ բաս, քանի որ նա ունի շատ խորը ձայն: Երբ մենք ժամերգության ենք գնում կամ երգչախմբի հետ ելույթ ենք ունեում, շատ շքեղ ենք հագնվում, և բոլորս կրում ենք նույն կտորից կարված հագուստներ:

Ես սովորում եմ առաջին դասարանում: Նախակրթարանն ու առաջին դասարանն ավարտել եմ շատ լավ գնահատականներով: Չորս տարեկանից սկսած ես երգում եմ: Ինչպես իմ մայրը, քույրերս ու եղբայրս, ես էլ եմ երգում երգչախմբում: Չնայած, որ ես ամենափոքրն եմ այդտեղ, դա ինձ շատ է դուր գալիս:

Եթե ես դպրոցում կամ եկեղեցում չեմ լինում, հաճույքով փազլ եմ հավաքում կամ անվագլոր եմ քշում: Ես շատ ժամանակ եմ անցկացնում նաև հեռախոսի մոտ-օրինակ, Յունիորի հետ, նա մեր քարոզիչն է և երգչախմբի ղեկավարը: Նա հեռախոսով աղոթում է ինձ հետ և ինձ աջալերում, որ ավելի շատ ջանք թափեմ դպրոցում սովորելու մեջ: Գեղեցիկ է, երբ մեզ մոտ մեծահասակներն օգնում են երիտասարդներին:

Իմ սիրելի ուտեստը ֆումբվան է, դա բանջարեղեն է, որը մի քիչ հիշեցնում է սպանախին: մենք այն ուտում ենք գետնանուշի պաստայով և մսով: Բացի այդ, ես սիրում եմ հավի միսը կիտրոնի և սոխի սոուսով- իհարկե, պիցցա և բուրգեր:

Մեր համայնքում առաջարկվում է երաժշտական կրթություն երիտասարդների և երեխաների համար: Ես նվագում եմ սոպրանո ֆլեյտա և սովորում եմ ջութակ նվագել: Ցանկանում եմ երբևէ այնպես լավ նվագել, ինչպես՝ իմ քույրերը:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 08 2024; լուսանկարները՝ մասնավոր՝ Luis/Jirawat/Curioso.Photography/Fanfo/stock.adobe: ձևավորումը՝ freepik.com

Լուսանկարները՝ evening_tao - stock.adobe.com

Եկեղեցու միասնականություն և բազմազանություն

Համանյքներ, որոնք աճում են ներգաղթի շնորհիվ, մշակույթներ, որոնք իրար են հանդիպում, տեղեկություններ, որոնք կայծակնային արագությամբ տարածվում են ողջ աշխարհում՝ եկեղեցու համար դա ոչ միայն օրհնանք է, այլ նաև մարտահրավեր: Այնուամենայնիվ, դրա համար կա մեկ ընդհանուր և միշտ վավերական պատասխան:

Լուսանկարները՝ Լուլուբաշի- stock.adobe.com

Առկա շարադրանքը ներկայացվել է 2023-ի աշնանը շրջանային առաքյալների միջազգային ժողովում և լույս է տեսել Հիմնական մտքերի 2024-ի 1-ին հատուկ համարում: Այդտեղ գլխավոր առաքյալը մեկնաբանում է իր ծառայությունը, որն ի թիվս այլ բաների, կայանում է նրանում, որ պահպանի և խթանի եկեղեցու միասնականությունը, ինչպես նաև հավատամքի տեսությունը միասնական ձևով տարածի/ ՆԱԵԴ 7,6,6/: Դրա հետ սերտ կապված է եկեղեցու ընդհանրականության, Ավետարանի և նրա տեղեկացման թեման: ,,Եկեղեցու ընդհանրականությունը,, թեմայի վերաբերյալ մի շարադրանք զետեղվել է Հիմնական մտքերի հատուկ համարում, որը լույս է տեսել 2017-ի ապրիլի 4-ի հատուկ համարում: Հաջորդիվ պետք է շարունակվեն և խորացվեն այս թեմայի վերաբերյալ մեկնաբանությունները:

Միգրացիոն շարժումներ- օրինանք և մարտահրավեր ընդհանրական եկեղեցու համար

Իր պատմության սկզբից նորառաքելական եկեղեցին զարգանում է արտագաղթի շնորհիվ: Շնորհակալ պետք է լինել գերմանախոս Եվրոպայի բոլոր հավատացյալներին, որ եկեղեցին կարողացավ Ամերիկա, Ավստրալիա և աֆրիկյան մի քանի երկրներ ոտք դնել: Արտագաղթողները հրավիրում էին նախ իրենց համերկրացիներին: Ժամերգությունները անց էին կացվում գերմաներենով, իսկ համայնքներում դրոշմված էր գերմանախոս մշակույթը: Երկար տևեց, մինչև որ վերանայում տեղի ունեցավ: Սակայն, եկեղեցին գնալով հարմարվում էր տեղի սովորույթներին և ճանապարհ էր հարթում տարբեր մշակույթների հավատացյալների ինտեգրման համար:

Մի քանի տասնամյակ ի վեր մեր եկեղեցում ինտեգրում է լինում Աֆրիկայից: Աֆրիկայից հավատացյալների միգրացիան իսկական օրինանք է եկեղեցու համար աշխարհի այլ մասերում: Նրանց հավատը, նրանց էներգիան մի առանձնահատուկ դինամիկա է բերում համայնքներ, որոնք դրա կարիքն ունեն: Սակայն, այդ միգրացիոն շարժումը նաև մարտահարավեր էր եկեղեցու համար: Նորեկներն ունենում են իրենց սեփական նորառաքելական մշակույթը, որը տարբերվում է տեղի մշակույթից: Կարելի է՞ մի համայնքից պահանջել ,,աֆրիկանացում,, միայն այն բանի համար, որ նրա անդամների մեծ մասը Աֆրիկայից է: Կամ պե՞տք է նորեկներից պահանջել, որ ինտեգրվեն տեղի մշակույթին: Այս խնդիրը միշտ առկա է: Այսօրվա հասարակության մեջ, այնուամենայնիվ, այն առանձնահատուկ արժեքորում ունի: Առճակատվելով զարգացումներին, որոնց նրանք չեն տիրապետում և իրենց ապագայի համար մտահոգությունից ելնելով՝ մարդիկ հակված են ետ քաշվել և կառչել ավանդական արժեքներից: Նման պահվածք կարելի է գտնել նաև մեր համայնքերում՝ ինչպես տեղացիների, այնպես էլ՝ նորեկների մոտ: Ինչպե՞ս պետք է արձագանքել այդ մարտահրավերին:

Հավատացյալների բազմազանություն – օրինություն և մարտահրավեր

Մեր համայնքների մեծ մասը բաղկացած է տարբեր տարիքի և կյանքի տարբեր կարգավիճակներում գտնվող հավատացյալներից, ովքեր միավորված են Քրիստոսի հանդեպ հավատով և առաքյալների ծառայության հետ կապվածությամբ: Այս բազմազանությունը հարստացնում է մեր եկեղեցին: Սուրբ Հոգու աջակցությամբ առաքյալների ծառայությունը միշտ ձգտում է յուրաքանչյուր կատեգորիայի հավատացյալների կարիքների և սպասումների հետ հաշվի նստել: Ամեն ինչ արտակարգ չէ, բայց ես այն կարծիքին եմ, որ եկեղեցին այդ առաջադրանքը բավականին լավ է կատարում:

Այսօր հասարակությունը հակված է անհատականությունը գերադասելու կոլեկտիվից: Մարդիկ շեշտում են իրենց առանձնահատկությունը, առաջ են քաշում իրենց յուրահատուկ լինելը և սպասում են, որ իրենց յուրահատուկ սպասումներն իրականանան: Նրանք ավելի անհանդուրժող են դառնում: Այս միտումը նկատվում է նաև եկեղեցում:

Եկեղեցու անդամների մի մասը ցանկանում է, որ եկեղեցին ավելի ուժեղ ներգրավվի հասարակության մեջ՝ որպես հակակշիռ կառավարությունների թերությունների: Մյուսներն այն տեսակետին են, որ հասարակական պարտավորությունները եկեղեցու առաջադրանքներին չեն պատկանում: Հավատացյալների մի մասը ցանկանում է հստակ պատասխան ստանալ, թե ինչպես պետք է իրենց պահեն, որպեսզի օրինվեն: Ոմանք էլ գերադասում են իրենց ազատությունը և մերժում են ցանկացած եկեղեցական միջամտություն իրենց անձնական կյանքին: Մի մասն ուզում է, որ եկեղեցում ոչինչ չփոխվի, մյուսներն էլ ուզում են ամեն ինչ փոխել: Մի մասի մոտ գերակշռում է էմոցիաները, մյուսների մոտ՝ խոհեմությունը: Անհնար է բոլորին միատեսակ դարձնելը:

Լուսանկարները՝ Լուսրաշի- stock.adobe.com

Տեղեկատվության գլոբալիզացիան օրինանք է և մարտահրավեր

Ինտերնետի շնորհիվ պարզապես հոսում են տեղեկությունները և արագ տարածվում ամբողջ աշխարհում: Այս զարգացումը շատ է հեշտացնում առաքյալների ծառայության և եկեղեցու աշխատանքը: Սակայն, այն իր հետ բերում է բարդությունների մի շարք: Այն, ինչ ասվում է մի տեղում կամ հավատացյալների մի խմբում, հավանաբար կարճ ժամանակում տարածվում է ամբողջ աշխարհում՝ ավելի շատ կամ ավելի պակաս ճշմարտությանը մոտիկ, իսկ ավելի շատ՝ իրականությունից կտրված: Հաղորդակցության այս ձևը լիովին անհարիր է ամբողջական թեմաների քննարկման համար, որոնք պահանջում են հեռավորություն և հիմնավոր խորհում:

Տիեզերական Ավետարան – մեր պատասխանը

Այս մարտահրավերներին այսօրվա առաքյալները վերաբերվում են նույն կերպ, ինչպես Պողոս առաքյալը՝ ,, Իսկ որովհետև հրեաները նշան են հայցում, և հեթանոսները իմաստություն են փնտրում, մենք քարոզում ենք խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների, բայց նրանց համար, որ կանչված են, հրեաներ, թե հեթանոսներ, Քրիստոսը Աստծո զորությունն ու Աստծո իմաստությունն է,,/ Կորնթացիներին Ա 1, 22-24/: Մենք մեր քարոզը կենտրոնացնում ենք տիեզերական Ավետարանի վրա, այն բանի վրա, որը կարևոր է բոլորի համար: Ավետարանի ընդհանրականությունը կայանում է նրանում, ինչը Հիսուս Քրիստոսը մեզ ուսուցանում է Աստծո մասին, մեր մասին, Աստծո և այլ մարդկանց հանդեպ մեր հարաբերության և այն փրկության մասին, որը մեզ առաջարկում է Աստված: Մենք տեղեկացնում ենք Աստծո կատարյալ լինելն ու սերը: Մենք տեղեկացնում ենք, որ նա ուզում է մեզ տալ հավիտենական կյանք, կատարյալ և հավերժական երանելիություն: Մենք գիտենք, որ Աստծո սերը չի ծառայում այն բանին, որ մարդու բոլոր հնարավոր ցանկություններն իրականացնի, այլ թույլ է տալիս նրան հասնելու այն ամենին, ինչը ծառայում է նրա փրկությանը:

Ավետարանի տիեզերական տեղեկացումը

Հիշենք այն մասին, թե ինչպես էր Պողոսը տեղեկացնում Ավետարանը՝,, Թեպետև ազատ էի բոլորից, բայց իմ անձը դրի բոլորի ծառայության համար, որպեսզի շահեմ շատերին: Հրեաների հետ եղա ինչպես հրեա, որպեսզի շահեմ հրեաներին, եղա օրենքի տակ, ինպես օրենքի տակ եղածները, ոչ թե նրա համար, որ օրենքի տակ էի, այլ որպեսզի շահեմ նաև նրանց, որ օրենքի տակ են: Օրենքի տակ չեղողների հետ եղա ինչպես օրենքի տակ չեղող մարդ, ոչ թե նրա համար, որ Աստծու օրենքի ենթակա չէի, այլ՝ Քրիստոսի օրենքի տակ էի, որպեսզի շահեմ օրենքի տակ չեղողներին, եղա տկարների հետ ինչպես տկար, որպեսզի շահեմ տկարներին: Բոլորի հետ ամեն ինչ եղա, որպեսզի թերևս փրկեմ ոմանց,,/ Կորնթացիներին Ա 9, 19-22/:

Մեծանալով հրեական հավատքով՝ Պողոս առաքյալը մովսիսական օրենքը սուրբ էր պահում, լավ և ճիշտ/ Հռոմ. 7,12/: Չնայած դրան՝ նա չէր ուզում ճնշել նրանց, ովքեր հրեա չէին: Նրա համար ամենակարևորը նրանց մեջ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատն արթնացնելն էր: Այսօր քրիստոնյաների մեծ մասը ընդունում է տասը պատվիրանների կարևորությունը: Թե ինչպես դրանք կմեկնաբանվեն, կախված է նրանց մշակութային միջավայրից և իրենց անհատական իրավիճակից: Առաքյալների առաջադրանքը չէ միջամտել հավատացյալների տարբեր մշակույթներին և ձգտումներին: Այդ առաջարանքը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մարդու

տեղեկացնեն, որ Աստված նրան սիրում է այնպես, ինչպիսին որ նա կա, և որ նա նրան ուզում է փրկել: Եվ ցույց տան նրան, որ նա իր տեղն ունի եկեղեցում, որ նրան այնտեղ հարգում են, հասկանում են, և նա սիրված է:

Պողոսը տկարների նման տկարանում է: Ո՞վ է տկարը: Եթե խոսքը գնում է պատվիրաները պահպանելու մասին, ապա յուրաքանչյուրը հակված է մյուսներին տկար համարելու:

Որպես օրինակ վերցնենք 4-րդ պատվիրանը: Աֆրիկացիները այդ պատվիրանի խախտում են համարում այն, թե ինչպես են եվրոպացիները վերաբերվում ծերերին: Իրենց ծնողներին խնամքի տներ տանելը նրանց կարծիքով 4-րդ պատվիրանի խախտում է: Արևմուտքում մարդիկ վրդովվում են, որ դեռ կան երկրներ, որտեղ ծնողները հղում անելով այս պատվիրանին՝ ստիպում են իրենց երեխային ամուսնանալ իրենց կողմից ընտրածի անձի հետ:

Աշխարհի մի մասում հոմոսեքսուալիզմը ծանր մեղք է համարվում: Կշտամբում են արևմտյան աշխարհին նման մեղավոր թուլություն հանդուրժելու համար, որն իրենք երբեք չեն հանդուրժի: Արևմուտքում շատ մարդիկ վրդովվում են՝ շատ երկրներում առկա կաշառակերության համար: Նրանք չեն կարողանում հասկանալ, որ քրիստոնյաները այնպիսի մեթոդներ են կիրառում ինչ որ բանի հասնելու համար, որոնք իրենք բարոյապես անընդունելի են համարում: Այս ցանկը կարելի է անվերջ երկարացնել: Մեզնից յուրաքանչյուրը ուրիշների աչքերով տկար է երևում: Իրականում մենք բոլորս էլ տկար ենք Աստծո առաջ:

Տկարների հետ տկար լինել, չի նշանակում լավ համարել այն ամենը, ինչը նրանք անում են կամ մտածում: Ի դեմս տկարների՝ պետք է ամենից առաջ սեփական տկարության մասին հիշել և ոչ մի դեպքում իրեն դիմացինից ավելի լավը չհամարել: Մենք գիտենք, որ Աստված տկարներին սիրում է այնպես, ինչպես մեզ է սիրում: Աստված մեզ չի պատժում մեր տկարությունների համար, այլ համբերատար է մեր նկատմամբ: Վերաբերվենք դիմացինին այնպես, ինչպես Աստված է մեզ վերաբերվում:

Չպետք է մյուսների սերն ու հավատը իրենց պահվածքով չափել: Այն կարծիքը, որը մենք ունենք մեր շրջապատի մարդկանց մասին, ոչ մի ներգործություն չունի այն սիրո վրա, որը Աստված տածում է նրանց հանդեպ: Բայց այն կարող է ազդել մեր թերության վրա: Աստված մեզ կդատի համաձայն այն բանի, թե ինչպես ենք մենք վերաբերվում մեր մերձավորին, ամենից առաջ նրա եղբայրներից ու քույրերից ,, ամենափոքրերին,,/ Մատթ. 25,40/, ովքեր մեր աչքերով տկար են:

Որպեսզի իրենց քարոզը ներգործություն ունենա, առաքյալները ուսուցանում են այն, ինչ Հիսուսն է նրանց ասել / Մատթ. 28,20/: Բայց, Տերը միշտ բացատրել է, որ սիրո պատվիրանը գերակա է օրենքի բոլոր դրույթներից/ Մատթ. 22,3-40/: Պողոս առաքյալն այն ճիշտ էր հասկացել՝ ,, Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք, բացի միմյանց սիրելուց, որովհետև ընկերոջը սիրողն օրենքը կատարել է: Քանի որ ,, Մի շնացիր,,; ,, Մի սպանիր,,; ,,Մի գողացիր,, ; ,,Սուտ մի վկայիր,, ; ,,Մի ցանկացիր,, և ուրիշ այլ պատվիրաններ էլ որ կան, այս խոսքի մեջ են բովանդակվում՝,, Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ,,: Սերն ընկերոջ նկատմամբ չարիք չի գործի, ուրեմն օրենքի լրումը սերն է,,/ Հռոմ 3, 8-10/:

Առանց հոգնելու տեղեկացնենք Հիսուս Քրիստոսի Ավետարանը, այն իսկապես տիեզերական է:!

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Երիտասարդները փարոս են վառում Կանադայում

Ընկերներ գտնելը շատ հեշտ է: Շուրջ 1000 երիտասարդներ Ամերիկայից, Ավստրալիայից և Հարավային Գերմանիայից հավաքվեցին օգոստոսի սկզբին, որպեսզի միասին լույս տան և իրենց ճառագայթները տարածեն:

Լուսանկարները՝ Հայրեն Քարլեսի, ՆԱԵ Կանադա

Մասնակիցներն իրենք վերջին օրը բեմադրեցին երիտասարդների նշանաբանը:

,,Ես չգիտեմ, թե դու նկատել ես, բայց մենք կրում ենք ճիշտ նույն շապիկը,,: ,,Ինչ լավ է, մենք պետք է անպայման ընկերներ լինենք,,: Ինստագրամյան հաշվում տեղադրված համաամերիկյան 2024-ի երիտասարդության օրվա նկարը աչք շոյող էր, երբ երկու երիտասարդ այդ շաբաթվա վերջին օրերին սբ Կատարինեում/ Կանադա/ Բրոք համալսարանի տարածքում հանդիպում են, հետո իրենց զգում են հավատով միմյանց հետ կապված և ուրախություն են ապրում այդ միջոցառման մի մասը լինելու համար:

Նրանց հետ այդտեղ օգոստոսի 2-ից մինչև 5-ը գտնվում էին շուրջ 1000 երիտասարդներ Ավստրալիայից, Բոլիվիայից, Չիլիից, Պարագվայից, Ուրուգվայից, Բրազիլիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից և Կանադայից: Բացման արարողության ժամանակ դրոնների շռուն շարքով ցույց էր տալիս երկրների դրոշները: Ոգևորված ծափերի ներքո դրոնները օդում ձևավորում էին նաև նորառաքելական եկեղեցու խորհրդանշանը և երիտասարդների օրվա նշանաբանը՝ Փայլ:

Ծանոթացում լույսի արագությամբ

Նշանաբանը, որը վերցրված է Մատթեոսի 5,16-ից / ,, Թույլ տվեք ձեր լույսը փայլի/, հենց առաջին օրը արտահայտվեց: Բացման արարողության ժամանակ երիտասարդները միասին մեծ աշտարակներ կառուցեցին կարտոններից, փուչիկներից և լույսերից, որոնք գիշերը լույս էին տալիս:

Լեզուները խոչընդոտ չէին հանդիսանում: Անհրաժեշտության դեպքում իրար հասկացնում էին ձեռքերի ու ոտքերի շարժումներով: Սահուն կերպով ծանոթանում էին իրար հետ ֆուտբոլ կամ բասկետբոլ խաղալիս, սեղանի կամ համակարգչային խաղեր խաղալիս: Իսկ ով համալսարանի այդ մեծ տարածքում մոլորվում էր, միանգամից օգնողներ էին մոտենում իրենց ,,Փայլ,, գլխարկներով, մինչ ընդհանրապես հասկանալը, որ խնդիր կա:

Միասին սովորել լույս տալ

Ինչպես կարող են իրենց լույսով լուսավորել համայնքը, քննարկում էին երիտասարդները

Խայտաբղետ ծրագիրն առաջարկում էր ժամանակ գլխավոր առաքյալի հետ երկխոսության և իմաստալից պահեր մահացածներին հիշելու:

աշխատանքային քննարկման ժամանակ իրենց անհատականության թեսթի օգնությամբ: Եվ, որպեսզի ընդհանրապես լույս տալ կարողանան, անհրաժեշտություն կա մենթալ առողջության: Դրա համար շրջանառվեց զեկուցում՝ ,, Սիրիր քեզ այնպես, որ երբեք չդադարես,,: Մասնակիցներին հորդորվեց ձեռքերը սրտերին դնել և ասել՝ ,, Ես դա արժևորում եմ – ես բավարար եմ ,,: ,, Այդ ժամանակ զգալի էր Աստծո սերը այդ հաճելի մթնոլորտում և մասնակիցների իրար հետ կապվածությամբ: Այս ամենը ճշմարիտ հոգու խնամք էր,,- պատմում էր մասնակիցներից մեկը:

Ավելին, քան հույսի կայծ

Օրերն սկսվում էին յոգայով, առավոտյան աղոթքով կամ երկար քնողների համար տիպիկ կանադական նախաճաշով: ,, Երբ դու օրը կարողանում ես սկսել ամբողջ աշխարհից եկած մարդկանց և Տիրոջ հետ, պարզապես նկատում ես, որը սերը նույնն է,,- ոգևորված ասում է մի երիտասարդ:

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերն էլ էր եկել Բրոք համալսարան: Նա ժամանակ գտավ երիտասարդների հետ զրուցելու: Ինչ փայլող պահեր է նա իր կյանքում ունեցել: Նա հիշում է այդ պահերի մասին՝ մեծ պահեր չեն եղել, որ նրան հուզած լինեին, քան այն, երբ հանդիպում էր հավատացյալ քույր-եղբայրների հետ, ովքեր ծանր հոգսի տակ էինն և չէին ընկրկում: Դա միշտ նրան մոտիվցրել է իր առաջադրանքը կատարելիս:

Շաբաթ երեկոյան ծրագրում կար այսպես կոչված Փայլ-փորձ: Այդ նպատակով շուրջ 1000 երիտասարդ մասնակիցները դպրոցական դեղին ավտոբուսներով գնացին կենտրոնական եկեղեցի: Աշխարհի ստեղծման մասին տեսանյութը դիտելով երիտասարդները սկսեցին երեկոն: Մութ դահլիճը միանգամից լուսավորեցին վառ լուսավորված թմբուկները: Մի նվագախումբ էր նվագում, փայլուն գնդակներ էին ցատկում մասսայի վրայով, բուռն ծափահարություններով ողջունում էին Բրանդտոն Լեյքին, ով 2020-ին նվաճել էր ,, America´s Got,, տաղանդ մրցանակը: Նա կատարում էր քրիստոնեական բանաստեղծական սլամ: Երիտասարդներն ակտիվ էին նաև միասին պարելու և երգելու ժամանակ:

Ավելի հանգիստ և խորհելու պահ էր համալսարանի տարածքում կատարված երեկոյան մոմավառությունը: Մոմերի լույսի և երաժշտության ներքո հիշում էին մահացածներին:

Փալող օրինակ

Կիրակի երեկոյան ժամերգության ժամանակ երիտասարդները նորից հանդիպեցին Կոմյունիթի եկեղեցում: Նվագախմբի հետ բեմի վրա նրանք կազմեցին մեծ երգչախումբ և հարավ-ամերիկյան ու գերմանական հյուրերը ներկայացրին ,,Բրիլլարան,, և ,, Աստծո սերը, Աստծո ողորմածությունը,,: Գլխավոր առաքյալը ժամերգության ժամանակ բացատրեց, թե ինչպես կարելի է Հիսուի նման լինել, որպեսզի ցույց տան Աստծո սերը:

Դրանից հետո երիտասարդները միասին մեկնեցին Նիագարայի- ջրվեժ, որտեղ հրավառությամբ լույսի մի մեծ շոու էր սպասում նրանց: Թեև այն երիտասարդների օրվան համահունչ չէր բեմականացված, բայց զգացվում էր այդպես, քանի որ ամենուրեք տեսնում էին երիտասարդների նույն փայլող թենոցներով և ,,Փայլ,, լոգոյով նույն սպիտակ շապիկներով:

Տեղեկատու

05.01.2025	Սբ. Գալլեն (Շվեյցարիա)
12.01.2025	Շփղեվալդ(Գերմանիա)
18.01.2025	Մոիսսաիա (Չադ)
19.01.2025	Լ Ջյամենա (Չադ)
31.01.2025	Կամպալա (Ուգանդա)
02.02.2025	Նաիրոբի(Քենիա)
09.02.2025	Հայդենհայմ (Գերմանիա)
14.02.2025	Քուքութա (Կոլումբիա)
16.02.2025	Բոգոտա(Կոլումբիա)
02.03.2025	դեռ որոշված չէ (Նիգերիա)
09.03.2025	դեռ որոշված չէ (Գերմանիա)
23.03.2025	Ուշուաիա (Արգենտինա)
26.03.2025	Սանտյագո դե Չիլի (Չիլի)
30.03.2025	Մոնթեվիդեո(Ուրուգվայ)

New Apostolic Church
International